

կամեցան բաժանել իրենց գործերը . հայերն ընտրեցին վերջնել գուքանը, իսկ քիւրդերը սուրը . այսօր ամեն մէկը կը վայելէ իր ընտրութեան արդիւնքը» .

«Յըլա . ֆէլլահ», կը նշանակէ մշակ երկրագործ , որ գործ ունի քրտինքի և խաղաղ աշխատանքի հետ . հետեւաբար աստիճան տու աստիճան նա կը կորսնցէ սրի մարդու յատկութիւնները՝ երբ բոլորովին ձեռքէ կը թողու սուրը . իսկ սրի մարդը երբ ձեռքէ կը թողու աշխատանքը բոլորովին , ու կ'ապրի միայն իր սրի ուժով , նա կը դառնայ պարզ վայրենի, լեռնական յափշտակիչ աւազակ :

Ահա այս ծայրահեղութիւնների մէջ կը գտնուէին հայերն ու քիւրդերը , և կեանքի մէջ ակամայ իրարու դէմ կը ցցուէին : Արդէն հայու ու քիւրդի մէջ գլորուած էր բարեկամական անջատման հակառակութեան ու թշնամութեան գնդակը : Հայերը այսպիսով անտեսական դրութեան մէջ ասպարէզ ունեցան քաղաքակրթուելու , իրենց օգնեց նա և հայ լեզուն , պատմութիւնը ու գրականութիւնը : Աշխատաւորական , արուեստաւորական , և առևտրական կեանքը, ստիպեց իրենց քաղաքակիրթ աշխարհի հետ շփումներ ունենալու . բայց այս ճիւղի մէջ իր ազատ առաջդիմութիւնը բնականաբար կ'երթար անջատուելու այն ստրկութենէն՝ որ քաղաքական , կրօնական և ազգայնական բնաւորութիւն կը կրէր : Յառաջդիմական այս աստիճանական զարգացումն հայուն կը տանէր խաղաղ ասպարիզով խաղաղ աշխատանքի լայնացման , որ արգելք կը գտնէր սրի մարդոցմէ ու յիշուած ստրկութեան պատճառէն : Արեւմտեան և հիւսիսային քրիստոնէայ ազգերու կառավարութիւնները օգուտ քաղելով այս դրութիւններէն , իրենց աշխարհակալական նպատակների համար . յարուցած էին «Արեւելեան հարցը»՝ Քրիստոնէից ազատութիւն անունով , որով հակառակութիւն և թշնամութիւնը աւելի կը բորբոքուին ապրող ազգաբնակութեանց միջև :

Քիւրդերը բոլորովին թողուցած տնտեսական կեանքի պայմանները , մնալով միայն սրի մարդ . այն ալ ոչ թէ առա-